

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 19.05.21թ. կայացած թիվ 11.20-21 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 31-ը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված "Պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատոր աշխատանքներ (մաս II)" (հեղինակներ՝ Ա. Կիրակոսյան, Ա. Վարդանյան, Ա. Ասատրյան, Ա. Մանասեյան, Վ. Հարությունյան) ուսումնական ձեռնարկի ֆիզիկայի ֆակուլտետների ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:
2. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ առաջարկելու հարցը:
3. Ֆակուլտետում իրականացվող նոր ուսումնական ծրագրերի ղեկավարների հարցը:
4. Ասպիրանտների ատեստավորման հարցը:

### **Լսեցին՝**

Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված "Պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատոր աշխատանքներ (մաս II)" (հեղինակներ՝ Ա. Կիրակոսյան, Ա. Վարդանյան, Ա. Ասատրյան, Ա. Մանասեյան, Վ. Հարությունյան) ուսումնական ձեռնարկի ֆիզիկայի ֆակուլտետների ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:

### **Ելույթ ունեցավ՝**

Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Վարդանյանը: Նա ներկայացրեց վերոհիշյալ ձեռնարկի բովանդակությունը, ինչպես նաև ձեռնարկի վերաբերյալ գրախոսներ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Հ. Բադալյանի և ՀԱՊՀ ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա Սահակյանի դրական կարծիքները և ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը:

### **Որոշեցին՝**

Հաշվի առնելով ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը՝ երաշխավորել պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված Ա. Կիրակոսյանի, Ա. Վարդանյանի, Ա. Ասատրյանի, Ա. Մանասեյանի և Վ. Հարությունյանի

"Պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատոր աշխատանքներ (մաս II)" ձեռնարկի ընդգրկումը ուսումնական գործընթացում և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում:

**Լսեցին՝**

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ առաջարկելու հարցը:

**Ելույթ ունեցավ՝**

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց առցանց գիտխորհրդի հարցման արդյունքները, որոնց համաձայն ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ է առաջադրվում Ռուլանդ Ավագյանը:

Սակայն Ռուլանդ Ավագյանը ինքնաբացարկ հայտարարեց:

**Լսեցին՝** Ֆակուլտետում իրականացվող նոր ուսումնական ծրագրերի ղեկավարների հարցը:

**Ելույթ ունեցավ՝** դեկան Ռ. Հակոբյանը: Նա առաջարկեց նշանակել Ֆակուլտետում իրականացվող նոր ուսումնական ծրագրերի ղեկավարների՝

Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ – Ա. Վարդանյանին

Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն – Ս. Գրիգորյանին

Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա – Ա. Մելքոնյանին:

Ռ. Հակոբյանը առաջարկեց դնել քվեարկության այդ հարցը:

Քվեարկության արդյունքում առաջարկը ընդունվեց:

**Լսեցին՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ավետիս Հովսեփյանի գիտական թեզի Ա. 04.16 “Միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա” մասնագիտությունը փոխարինելու Ե.14.02 “Միջուկային էներգետիկ կայանքներ” մասնագիտությամբ հարցը և նշանակել նրա գիտական ղեկավար ֆ.ա.գ.թ միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Սուրեն Բզնունուն:

**Ելույթ ունեցավ՝** Ս. Բզնունին: Նա ներկայացրեց նշված բնագավառում իր կատարված աշխատանքները և տպագրված հոդվածները, ինչպես նաև ԲՈԿ-ի կողմից նրան տրված ատենախոսության ղեկավար լինելու թույլատվությունը: Բզնունին նշեց նաև, որ Ա. Հովսեփյանի տպագրված երկու հոդվածները վերաբերվում են միջուկային

Էլեկտրակայանների բնագավառին: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է Ա. Հովսեփյանի ատենախոսության մասնագիտական կողմը փոխել, դարձնելով այն Ե.14.02 “Միջուկային էներգետիկ կայանքներ”

**Որոշեցին՝** Ա. Հովսեփյանի գիտական ղեկավար նշանակել Ս. Բզունուն: Փոխարինել Ա. Հովսեփյանի մասնագիտության կողմը, դարձնելով այն Ե.14.02 “Միջուկային էներգետիկ կայանքներ”:

**Լսեցին՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ավետիս Հովսեփյանի ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ս. Բզունին: Նա նշեց, որ Ա. Հովսեփյանը ունի 2 տպագրված հոդված և առաջարկեց ատեստավորել Ա. Հովսեփյանին:

**Որոշեցին՝** Ատեստավորել Ա. Հովսեփյանին:

**Լսեցին՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 3-րդ տարվա ասպիրանտ Գոռ Հրաչիկի Նիկողոսյանը անցած ժամանակաշրջանում կատարած աշխատանքի ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ա.Ռ. Բալաբեկյանը ներկայացրեց, որ ասպիրանտ Նիկողոսյանը ունի 8 տպագրված հոդվածներ գրախոսվող ամսագրերում: Նա հանձնել է պարտադիր դասընթացների բոլոր քննությունները: Ատենախոսությունը պատրաստ է և ներկայացված է պաշտպանության:

**Որոշեցին՝** Ատեստավորել միջուկային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 3-րդ տարվա ասպիրանտ Գոռ Հրաչիկի Նիկողոսյանին:

**Լսեցին՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ Սարգիս Հովհաննեսի Ֆալթաջանյանը անցած ժամանակաշրջանում կատարած աշխատանքի ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ա.Ռ. Բալաբեկյանը ներկայացրեց, որ ասպիրանտ Ֆալթաջանյանը ունի 2 տպագրված հոդված գրախոսվող ամսագրերում: Նա հանձնել է պարտադիր դասընթացների բոլոր քննությունները: Ներկայումս աշխատում է ինքնուրույն հոդվածի վրա:

**Որոշեցին՝** Ատեստավորել միջուկային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ Սարգիս Հովհաննեսի Ֆալթաջանյանին:

**Լսեցին՝** Օպտիկայի ամբիոնի առկա ուսուցման I տարվա ասպիրանտ ՄԱՔՍԻՄ ԼԻՊԱՐԻՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ** Ռ. Հակոբյանը: Նա նշեց, որ Մ.Լ. Սարգսյանը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր «Իզոտրոպ և անիզոտրոպ միջավայրերում ձևավորված կառուցվածքների մեխանիկական և օպտիկական հատկությունների ուսումնասիրումը» թեմային վերաբերվող գիտական աշխատանքների վերլուծություն: Մշակել և իրականացրել է փորձեր վերոհիշյալ թեմայի շրջանակներում:

**Որոշեցին՝** Ատեստավորել Մ.Լ. Սարգսյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Լսեցին՝** Օպտիկայի ամբիոնի ուսումնառության IV տարվա հեռակա ասպիրանտ **ՏԱԹԵՎԻԿ ՄԱԿԻՉԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ** ատենախոսության հարցը:

**Ելույթ ունեցավ** ամբիոնի վարիչ, ասպիրանտի գիտական ղեկավար պրոֆեսոր Ռ.Բ. Ալլահվերդյանը նշեց, որ Տ.Մ. Սարուխանյանի թեկնածուական ատենախոսության «Լազերով մակաձված կողմնոտ բոշումային և հիդրոդինամիկական երևույթների փորձարարական հետազոտումը հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում և պոլիմերներում» թեման նպատակահարմար է վերանվանել «Լազերով մակաձված ֆլուորեսցենցիայի փորձարարական հետազոտումը հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում և պոլիմերներում» :

**Որոշեցին՝** Ատեստավորել Տ.Մ. Սարուխանյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Տ.Մ. Սարուխանյանի թեկնածուական ատենախոսության «Լազերով մակաձված կողմնոտ բոշումային և հիդրոդինամիկական երևույթների փորձարարական հետազոտումը հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում և պոլիմերներում» թեման վերանվանել «Լազերով մակաձված ֆլուորեսցենցիայի փորձարարական հետազոտումը հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում և պոլիմերներում» :

**Լսեցին՝** ԵՊՀ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի 1-ին տարվա առկա ասպիրանտ Դավիթ Գագիկի Խեչոյանի ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ասպիրանտի գիտական ղեկավարը՝ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ ֆիզմաթ. գիտ. դոկտոր Ե.Շ.Մամասախլիսովը նշեց, որ հաշվետու ժամանակամիջոցում Դ.Գ.Խաչոյանը՝ “Նանոմասնիկների փոխազդեցությունը միաշղթա նուկլեինային թթուների հետ” վերնագրով ատենախոսության շրջանակներում տպագրել է 2 հոդված (Sh. Tonoyan, D. Khechoyan, Y. Mamasakhlisov, and A. Badasyan, Statistical mechanics of DNA-nanotube adsorption Phys. Rev. E 101, 062422 – Published 29 June 2020 և D.

G. Khechoyan, V. F. Morozov, Physical Adsorption of Single-Stranded DNA on Carbon Nanotube [Journal of Contemporary Physics \(Armenian Academy of Sciences\)](#) 2021, Vol 56 (1), pp. 65-68 . DOI: [10.3103/s1068337221010096](#) ) և աշխատում է ատենախոսության գրականության ակնարկի ձևավորման վրա :

**Որոշեցին՝** Ատեստավորել Դ.Գ. Խեչոյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Լսեցին՝** Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Տիգրան Ղուկասյանի ատեստավորման հարցերը:

**Ելույթ ունեցավ՝** Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ասպիրանտի գիտական ղեկավար Արշակ Վարդանյանը նշեց, որ Տիգրան Ղուկասյանը ավարտում է ուսուցման առաջին տարին: Հաշվետու ժամանակահատվածում հետազոտությունները նվիրված են եղել կիսահաղորդչային քվանտային լարում լույսի գծային եւ ոչ գծային բնութագրերի՝ կլանման գործակցի եւ բեկման ցուցչի փոփոխության վրա պոլարոնային երեւոյթների ազդեցության ուսումնասիրմանը: Այդ խնդիրները ուսումնասիրվել են նաեւ լարի առանցքով ուղղված մագնիսական եւ դրան ուղղահայաց էլեկտրական դաշտերի առկայությամբ: Ստացված արդյունքները հոդվածի տեսքով լույս են տեսել «Superlattices and Microstructures» գիտական պարբերականում եւ զեկուցվել երեք միջազգային գիտաժողովներում:

**Որոշեցին՝** Ատեստավորել պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Տիգրան Ղուկասյանին:

**Լսեցին՝** Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Ստեփանյանի ատեստավորման հարցերը:

**Ելույթ ունեցավ՝** Ա. Վարդանյանը նշեց, որ հայցորդ Արմեն Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության աշխատանքներն ավարտական փուլում են եւ սպասվում է, որ ընթացիկ տարում նա ատենախոսությունը կպաշտպանի:

**Որոշեցին՝** Ատեստավորել պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Ստեփանյանին:

**Լսեցին՝** Տեսական ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Սիգրան Պետրոսյանի ատեստավորման ատեստավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Տեսական ֆիզիկայի ամբիոնի ամբիոնի վարիչ Ա. Սահարյանը: Նա նշեց, որ Տ. Պետրոսյանը ավարտում է ուսուցման 3-րդ տարին: Հաշվետու ժամանակահատվածում հետազոտությունները նվիրված են եղել վակուումային քվանտային

Երևույթների ուսումնասիրմանը ֆերմիոնային դաշտի համար կոնական օղակներում և սկալյար դաշտի համար Կազիմիրի էֆեկտին՝ բացասական տարածական շերտերով դե Միտտերի տարածա-ժամանակում սֆերիկ սահմանի առկայությամբ: Ասպիրանտի աշխատանքը եղել է արդյունավետ: Նա հրատարակել է երկու գիտական հոդվածներ միջազգային պարբերականներում և մեկ գիտական հոդված «Armenian Journal of Physics» հանդեսում: Նա նաև ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների հետ տարվող ուսումնական և կազմակերպչական աշխատանքներում:

**Որոշեցին՝** Ատեստավորել տեսական ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Տիգրան Պետրոսյանին:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝

Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝

Գ. Հ. Հովհաննիսյան